Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. դեկտեմբերի 26-ի N 459- Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԸՆՏԱՆԻՔԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ»

1	2	3
1.	Ծրագրի նպատակը	Նպաստել Տավուշի մարզում աղքատության կրճատմանը, հզորացնել համայնքները՝ ընտանիքների և երեխաների կյանքի որակի բարելավման և զարգացման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում Ավստրական զարգացման գործակալությունը և «ՍՕՍ մանկական գյուղեր» Ավստրիան:
4.	Ծրագրի կատարողը	Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, քաղ. Երևան, Հրաչյա Քոչարի 8, բն. 18-19):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում: Այն առնչվում է սոցիալական, իրավական և կրթական բնագավառներին:
6.	Ծրագրի բյուջեն	15.11.2018-30.06.2021 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է 256 174 401 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են սոցիալական ռիսկի ենթակա 450 երեխաներ և 200 ընտանիքներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է 15.11.2018-30.06.2021 թվականների ընթացքում:

1	2	3
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Կրթադաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ 3 տարվա համար կազմում է 26 274 000 ՀՀ դրամ (որից՝ 12 876 000 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում)՝ 1.1. դպրոցական պարագաների տրամադրում՝ 4,698,000 ՀՀ դրամ. 1.2. նյութեր՝ խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ 8 700 000 ՀՀ դրամ. 1.3. դասապատրաստումների և արտադասարանական/զարգացման խմբակների վճար՝ 12 876 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում): 2. Առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք՝ ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում, իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավուքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ 3 տարվա համար կազմում է 25 143 000 ՀՀ դրամ (որից՝ 4 524 000 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում)՝ 2.1. ծրագրի շահառուների համար դեղորայք, վիտամիններ, օժանդակ սարքավորումներ, փոքր վիրաբուժական միջամտություններ՝ 8 700 000 ՀՀ դրամ. 2.2. ծրագրի շահառուների համար դասընթացների կազմակերպում՝ 4 524 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 2.3. ծրագրի շահառուների համար դասընթացների կազմակերպման և խորհրդատվությունների մատուցման նպատակով տարածքի վարձակալում և նյութերի տրամադրում ՝ 9 657 000 ՀՀ դրամ. 2.4. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավուքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ 2 262 000 ՀՀ դրամ :

1	2	3
		3. Ծրագրի շահառուներին նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում (սննդի, հիգիենայի պարագաների և հագուստի տրամադրում) և տնտեսական կայունացման աջակցություն (աշխատանքային գործիքներ, սարքեր և սարքավորումներ աշխատանքային գործունեություն ծավալելու համար)՝ 3 տարվա համար կազմում է 29 000 000 ՀՀ դրամ: 4. Տրամադրվող տարածքի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում՝ 3 տարվա համար կազմում է 696 000 ՀՀ դրամ: 5. Համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ (սնունդ և նյութեր)՝ 3 տարվա համար կազմում է 5 533 200 ՀՀ դրամ: 6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ 3 տարվա համար կազմում է 67 233 600 ՀՀ դրամ (2 հոգեբան և 5 սոց. աշխատող), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում)՝ 6.1. սոցիալական աշխատողներ՝ 48 024 000 ՀՀ դրամ, 5 աշխատակից. 6.2. հոգեբաններ՝ 19 209 600 ՀՀ դրամ, 2 աշխատակից: 7. Այլ ծրագրային ծախսեր՝ 3 տարվա համար կազմում են 51 898 400 ՀՀ դրամ, այդ թվում՝ 7.1. կարճատև ուսուցում՝ 14 430 400 ՀՀ դրամ (ծրագրի մասնակիցների մասնագիտական վերապատրաստում), (որից՝ 783 000 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 7.2. աշխատակազմի սուպերվիզիա՝ 348 000 ՀՀ դրամ (մասնագիտական աջակցություն անձնակազմին), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 7.3. ենթադրամաշնորհներ՝ 37 120 000 ՀՀ դրամ (այս գումարն ստացողներն են՝ ծրագրի իրականացման ընթացքում կազմավորված 8 համայնքային նախաձեռնող խմբեր, այդ խմբերը բաղկացած են լինելու համայնքի անդամներից և նրանց տրամադրվող ենթադրամաշնորհն ուղղված է լինելու համայնքի զարգացմանը), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում): 8. Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում՝ 3 տարվա համար կազմում է 1 508 000 ՀՀ դրամ (ծրագրային ծախսեր):

1	2	3
		9. Տպագրություններ, տեսանյութեր և բրոշյուրներ՝ 3 տարվա համար կազմում է 870 001 ՀՀ դրամ 10. Միջոցառումների (կոնֆերանսներ) համար նախատեսված դահլիճ և սնունդ՝ 3 տարվա համար կազմում է 1 073 000 ՀՀ դրամ (ծրագրային ծախսեր): 11. Միջոցառումներին հրավիրված միջազգային մասնակիցների տրանսպորտային և կեցության ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է 1 160 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում): **Կազմակերպական ծախսերը՝ 3 տարվա համար կազմում են 45 785 200 ՀՀ դրամ՝** 1 .աշխատակազմի վերապատրաստման ծախսեր. 2. աշխատակազմի (վարչական անձնակազմի) աշխատավարձ. 3. անձնակազմի բժշկական ապահովագրություն. 4. տրանսպորտային միջոցների նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում, վառելանյութ և ապահովագրություն. 5. Տավուշի մարզի սահմանամերձ գոտում գտնվող շահառուներին սպասարկելու նպատակով տրանսպարտոյային միջոցի ներմուծում. 6. կոմունալ վճարներ և հեռահաղորդակցություն. 7. գրենական պիտույքներ և պարագաներ. 8. բանկային, չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր. 9. ծրագրի նախնական և վերջնական գնահատում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Գրենական պիտույքների, նյութերի և այլ պարագաների ձեռքբերում (շահառուների և գրասենյակի համար)՝ 3 տարվա համար կազմում է՝ 15 903 600 ՀՀ դրամ: 2. Ծրագրի շահառուների համար դեղորայքի, օժանդակ սարքավորումների, փոքր վիրաբուժական միջամտությունների ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է 8 700 000 ՀՀ դրամ: 4. Ծրագրի շահառուների համար իրավաբանական խորհրդատվության և աջակցության տրամադրում՝ 3 տարվա համար կազմում է 2 262 000 ՀՀ դրամ: 5. Ծրագրի շահառուների համար սննդի (ներառյալ համայնքային կառույցների ներկա-յացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումների համար նախատեսված սնունդը), հիգիենայի պարագաների և հագուստի ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է 17 133 200 ՀՀ դրամ:

1	2	3
		6. Ծրագրի շահառուների համար աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով աշխատանքային գործիքների և սարքերերի ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է 17 400 000 ՀՀ դրամ: 7. Գրասենյակի տեխնիկական բազայի ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է 1 508 000 ՀՀ դրամ: 8. Տպագրությունների, տեսանյութերի և բրոշյուրների ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է 870 001 ՀՀ դրամ: 9. Ծրագրի շահառուների համար դասընթացների կազմակերպման և խորհրդատվությունների մատուցման, ինչպես նաև տարբեր միջոցառումների (կոնֆերանսների) իրականացման համար նախատեսված տարածքի վարձակալում՝ 3 տարվա համար կազմում է 10 730 000 ՀՀ դրամ (ծրագրային ծախսեր): 10. Տրանսպորտային միջոցների նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում՝ 3 տարվա համար կազմում է 1 044 000 ՀՀ դրամ: 11. Տրանսպորտային միջոցների համար վառելանյութի ձեռքբերում՝ 6 264 000 ՀՀ դրամ: 12. Տավուշի մարզի սահմանամերձ գոտում գտնվող շահառուներին սպասարկելու նպատակով տրանսպորտային միջոցի ներմուծում՝ 6 960 000 ՀՀ դրամ: 13. Կոմունալ վճարներ և հեռահաղորդակցություն 3 տարվա համար կազմում է 1 670 400 ՀՀ դրամ: 14. Տրամադրվող տարածքի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում՝ 3 տարվա համար կազմում է 696 000 ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը 15.11.2018-30.06.2021 թվականների համար կազմում են 45 785 200 ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 17.87 տոկոսը, այդ թվում՝ 1. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է 1 160 000 ՀՀ դրամ. 2. աշխատակազմի (վարչական անձնակազմի) աշխատավարձ՝ 3 տարվա համար կազմում է 17 539 200 ՀՀ դրամ (թվով 2 աշխատակից). 3. անձնակազմի բժշկական ապահովագրություն՝ 3 տարվա համար կազմում է 1 740 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում).

1	2	3
		4. Տրանսպորտային միջոցների նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում, վառելանյութ և ապահովագրություն՝ 3 տարվա համար կազմում է 7 656 000 ՀՀ դրամ՝ 4.1. ապահովագրություն՝ 348 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում), 4.2. տրանսպորտային միջոցների («Opel Frontera» մարդատար մեքենա) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում՝ 1 044 000 ՀՀ դրամ, 4.3. տրանսպորտային միջոցների համար վառելանյութ 6 264 000 ՀՀ դրամ. 5. Տավուշի մարզի սահմանամերձ գոտում գտնվող շահառուներին սպասարկելու նպատակով տրանսպարտոյային միջոցի ներմուծում՝ 6 960 000 ՀՀ դրամ. 6. կոմունալ վճարներ և հեռահաղորդակցություն՝ 3 տարվա համար կազմում է 1 670 400 ՀՀ դրամ. 7. գրենական պիտույքների և պարագաներ 3 տարվա համար կազմում է 2 505 600 ՀՀ դրամ. 8. բանկային, չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր և այլն՝ 3 տարվա համար կազմում է 174 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 9. ծրագրի նախնական և վերջնական գնահատում 3 տարվա համար կազմում է 6 380 000 ՀՀ դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ